

տի մեր ազգին արմատական և հիմնական բարիք մ'ընելու համար, առանձնապէս պիտի ջանանք տգիտութեան իշխանութիւնը կործանել. մտքերը ճշմարտութեան պատրաստել սրտերը բարոյականութեան վարժեցնել: Եւ այս ուրիշ բանով չը լինիր, եթէ ոչ մեր խորին ուշագրութիւնը մեր ազգային կրթութեան և դաստիարակութեան վրայ դարցնելով: Հետեւապէս աւելի ուրախալի էր դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ ընդունիլ ձեզմէն եւ հրատարակել, քան թէ այն տխուր նկարագիրը, որով նկարագրած էիք մի քանի անձանց արարքներն:

— Ընդդիացի դիտնական Լյախոպոս մի, ճանապարհորդելով 'ի Պաղեստին եւ փափաքելով Լրեւելեան Վրիստոնէից նկատմամբ տեղեկութիւններ քաղել, այցելութեան եկաւ մեր Ս. Պատրիարքին և այն այցելութեան ժամանակ, որ քանի մի ժամ տեւեց, երկարօրէն խօսակցեցաւ Ս. Պատրիարքի հետ, և մեր ազգայնութեան, Նկեղեցւոյ և դաւանութեան մասին կարեւոր ծանօթութիւններ ստանալով՝ մեծաւ գոհութեամբ մեկնեցաւ, ցաւ յայտնելով միայն որ ցարդ իրստ թերի դաղափար ունեցած են մեր Ըզդի և Նկեղեցւոյ նրկատմամբ:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Քաղաքիս նորնտիր Կառավարին Սեմափոյլ Լի Պէյ ամսոյս 17 ին քաղաքս ժամանեց, որում գիմաւորուած էին երեք Պատրիարքութեանց և բոլոր Հիւպատոսարանաց թարգմաններն եասախճիներով հանդերձ: Օգն գեղեցիկ էր և քաղաքիս բնակչոց գրեթէ մեծ մասն ճանապարհաց վերայ կրսարստէին նորեկ Կառավարչի հանդիսաւոր մուտքն տեսնելու: Իսկ 19 ին 'ի ներկայութեան բոլոր սրաշոժոսկալաց, թարգմանաց եւ բազմախուռն հանդիսականաց Սեմ. Կառավարչի հաստադրութեան Կայսերական Հրովարտակն կարդացուեցաւ և այնուհետեւ պաշտօնական այցելութիւնքն սկսան:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ԳՈՐԾՆԱԿԱՆ

Յօդէաց Ա. Ա. Սահէն:

Այն նոր հրատարակութիւնն, յորմէ մի օրինակ նուէր ղրկած է Մեծ, Հեղինակն՝ Ս. Աթոռոյս Թանգարանին, դիւրութոյց եղանակաւ յօրինուած է նորավարժից համար:

Կան արդէն քանի մի ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ և ահա՛ Մեծ, Սուրէն եւս ներկայ Քերական-Քիւն կը մատուցանէ Ազգային դպրոցաց, մայրենի լեզուի ուսումնի դիւրացնելու համար: